

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ*

6. ՄՏՔԻ ԵՎ ՀՈԳԻԻ ՀՈՐԻՋՈՆ

Բոլոր անոնց համար, որոնք նոր օրերու մեջ ստիպված են զբաղիլ կյանքի երևույթներով և անոնց վերլուծությամբ, դժվարին պահեր հաճախ կրկան: Դարու մը մեջ, երբ գիտությունը շատ մը հին տախտակներ եկավ փշրեց, փիլիսոփայական դպրոցներ տապալեց և անոնց տեղ ստեղծեց նոր վարդապետություններ, երբ նորանոր հայտնաբերություններ շրջեցին անցյալին մասին մեր գիտցածները և սկսան հորինել բոլորովին նոր պատմություն մը, և երբ կյանքը իր ստեղծած նոր պայմաններով հասարակական հարցերու մասին սկսավ տարբեր լուծումներ առաջադրել, քան ինչ որ մարդիկ կրնային խորհիլ երեկ, անշուշտ դժվար է մեկին ձերբազատվիլ հին տեսությանց կապանքներից, երեկը զենք և նոր օրերու լույսով, կյանքի նոր երևույթները վերլուծել հին նախապաշարումներու հետ ամեն կապ խզած, և վաղվան համար նոր լուծումներ առաջարկել՝ բոլորովին մոռցած երեկը իր քարացած ավանդությանց մեջ:

Պարագան ավելի փափուկ է հոգևորականի մը համար, որ գրիչ կփորձե շարժել փշոտ հարցերու մասին: Ու մեր օրերուն գրեթե ամեն հարց, որ կապ ունի կյանքի երևույթներուն հետ՝ քիչ մը փշոտ է, որովհետև մարդը կմղե չհեռանալ գիտության վճիռներեն, և անցյալը դատելու ատեն մեկ կողմ

նետել կանխակալ ամեն կարծիք: Մանավանդ շրջանի մը մեջ, երբ գիտության անունով մահացու կոիվ կմղվի կրոնքներու նվիրագործած ավանդությանց դեմ, և տնտեսական պայմաններու բովեն կանցնի բարոյական ամեն սկզբունք և ընկերային ամեն նշանաբան, կնճռոտ կդառնա հոգևորականի մը դերը, երբ կփորձե հասարակական խնդիրներու կալվածը մտնել:

Դժվար է, հետևաբար, հոգևորականի մը համար, ավանդությանց թումբը փշրել՝ հին դարերը պատմելու առթիվ նոր օրերու մարդոց, կամ վերլուծելու առթիվ հին օրերու դեպքերու: Աղկն է, որ բոլոր այն երկերը, որոնք հոգևորականներու մտքին արգասիքն են, միշտ տուրք մը կուտան ավանդություններուն, հաճախ երբեք դուրս չելլելով անոնց հովանիին, երբեմն ալ վախճալով անոնց շրջանին շատ հեռանալ: Բացառություն պետք է սեպել անոնք, որոնք կրնան նախապաշարումները բարձրադասել մեկ անգամին, և իրերը դատել առանց կանխակալ կարծիքի, ձեռք-ձեռքի ընթանալով գիտության պատգամներուն հետ:


Դժվար է նույնպես հոգևորականի մը համար, նոր օրերու հոգեբանությամբ դիտել կրոնքի հետ կապված իրերը: Դարը արդեն քանդորդն է, ու հոգևորականության առջև կընեն այնպիսի հարցեր, որոնց պատասխանը՝ դժվար է տալ ավանդությանց կոթնած: Ու գաղափարներու հորձանուտին մեջ, զոր ստեղծած է նոր օրերու կյանքը, դժվար է նոր արժեքները չափել հին օրերու կշիռքով:

* Եստիանակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի X թ-ից:

Բացառությամբ սակավաթիվ են հոսալ, որովհետև ամենուր տրված չէ տատամսումները մեկեն թոթափել, ու գիտության անձնատուր ըլլալ առաջին պահեն, առանց արմատեն սարսելու:

Քիչ չէ պատահած, որ մեր հոգևորականները ևս գտնվին այդպիսի փշոտ հարցերու առջև: Կականարկենք անշուշտ անոնց, որոնք

խոսքը ըսել հարցերու մասին, ուր ավանդությունները դիմանալու ալլեա ուժ չունենին: Դուրյան կփորձեր փշոտ հարցը լուծել քմծիծաղով մը, և իր տարակույսները կսքողեր բանաստեղծական դարձվածքներու մեջ: Իրենց դաստիարակած սերունդեն քիչեր միայն ծեծված ճամբաներեն կրցան բաժնվիլ, և գլուխ հոգնեցնել կրոնքեն դուրս բաներու



ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԽԱՉԱՏՈՒԹՅԱՆ (1960 թ.)

փորձված են մխրճվիլ կյանքի երևույթներուն լուսաբանությանը մեջ, կամ հայ ժողովուրդի անցյալին մասին նոր խոսք մը ըսել՝ գիտության կատարած այսքան նվաճումներեն հետո: Օրմանյան ճարտար էր շատ շմտնել վտանգի գոտին, ու շրջադարձ կատարել, երբ ստիպված էր անպատճառ իր

մասին, լայնցնել իրենց հոգվույն հորիզոնը, ափունքներեն հեռանալ:

Գարեգին Տրապիզոնցին այդ քիչերեն է: Կղզաս արդարև, որ ան չէ ուզած վանդակել իր մտածումը և որ մտքի և հոգիի հորիզոն է բացած իրեն: Որ քարացած ավանդությունները շեն կաշկանդած զինք, ու

կփորձեմ իրենրուն խորը ևս թափանցել: Որ ան տեղյակ կթվի ըլլալ փիլիսոփայական վարդապետություններու, որոնք մեր օրերու մեջ մեկնությունը կփնտռեն տիեզերական երևույթներուն, որքան կրոնքի ավանդույթություններուն, նույնքան ալ գիտության վճիռներուն դիմելով վերջնական եզրակացություններին առաջ:

Այդ ընելու համար պետք էր վեր կանգնած ըլլալ նախապաշարումներին, պահ մը մոռնալ ամեն կապ, ու պաղարկուն մը դիտել կյանքն ու իր երևույթները:

Գարեգին Տրապիզոնցին արդարեւ կըսեմ բացե-բաց, թե ինք չի սիրեր կառելի տա-բան, ոչ ալ քարացած պահել իր հոգին երևույթներու առջև, որոնց թափանցելու համար ավելի լայն հայացք պետք է, քան ինչ որ մեզ կրնա տալ աստվածաբանությունը իր հին մեթոդներով:

«Ո՛չ ի պաշտոնն և ո՛չ ալ թերևս ի բնի աստվածաբան մ'եմ,— կըսե ան— Զեմ սիրեր պաշտոնական— եկեղեցական այն աստվածաբանությունը՝ որ ավելի կամ պատշաճ չափով վարակված է, ավա՛ղ, միջնադարյան (սկոլաստիկ) շունչով մը: Մերթ սոփիստությունը և մերթ մոլեռանգությունը, մեկը հախտու հավակնությամբ և մյուսը աններողությամբ դիմված, կդարձնեն զայն՝ պարզապես հոգիներու համար՝ անհամակրելի» («Շողակաթումներ», էջ 13):

Աստվածաբանական մարզավայրերու մեջ չէ ուզած ան հետևաբար մթաղել իր տեսակետները կրոնաբարոյական և հասարակական հարցերու մասին, և իբրև հոգևորական հավատարմի մասյով հանդերձ կրոնքին ու անոր բարոյական սկզբունքներուն՝ կյանքի ստեղծած նոր պայմանները ուղած է հաշվի առնել ընկերային հարցերու շուրջ իր տեսությանց մեջ:

Մտքի և գրչի մարդը զննելու առթիվ Գարեգին Տրապիզոնցիի մեջ, չէինք կրնար իր դիրքը չճշտել նախ ավելորդապաշտությանց և նախապաշարումներու առջև, որոնք կփակեն մտքի և հոգիի հորիզոնը՝ տրամաբանող մարդուն:

Գարեգին Տրապիզոնցին կրցավ գերին շղատնալ նախապաշարումներուն, և կրցավ հետևաբար հորիզոն բանալ իր մտքին ու հոգիին առջև:



Գերագույն էակի գաղափարն է ամենն ատաշ, որ իսկույն կցցվի առջևդ, երբ փորձես միտության, կամ ավելի ճիշտ մերձեցման գետնի մը գտնել կրոնքի և գիտության միջև Գարեգին Տրապիզոնցին լրացավ իր էջեր ունի, որոնք գերագույն էակի մը գաղափարը կշոշափեն, և որոնք առհասարակ

ջերմ հավատացյալի մը տեսություններն են՝ առանց սակայն քարացած մնալու դոգմաներու մեջ: Անոնք կփորձեն գերագույն էակի մը գոյությունը ապացուցանել, առանց մխրձվելու աստվածաբանական համարտակությանց մեջ, ուրիշ կոպան շունենալով, քայց լեթե քանականությունն ու տրամաբանությունը:

Ահա թե ինչպես կփորձեմ հանգիլ ան Գերագույն էակի մը գաղափարին:

«Իսկ գերագույն Զորություն մը կա, ո՛վ կրնա ուրանալ, խորհուրդ մը արարչագործ, լիմացականություն մը անսահման, էություն մը անժանոթ՝ որ նյութին մեջ կտարրանա և զայն կենդանացնող ուժին մեջ կհայտնվի ու կգործի: Գերագույն Ուժ—Հոգին է Ան: ...Եվ մարդը այդ խորհուրդին համար ավելի կամ նվազ գեղեցիկ բազին մը կկրել իր հոգուն խորը» («Շողակաթումներ», էջ 19—20):

Եվ այնուամենայնիվ ան կհավատա, թե մարդկային միտքը դեռ շատ պետք է շարձարկի, մինչև որ կարենա լիովին ճանչնալ Գերագույն այդ էակը, «աստիճանական հայտնություններու շնորհիվ» («Շողակաթումներ», էջ 7):

Անոր կարծիքով՝ Գերագույն էակի մը գոյության մասին կասկածողները և հետևաբար հավատքը արձամարհողները բուն կրոնը չեն, որ նկատի ունին, այլ անոր խելագարությունը մի՞թեք միայն, «... հանուն կրոնի գործված գեղձումներուն, վերջապես այն բոլոր պայմանագրական արտաքին ձևերուն հետ՝ որոնք կրոնի էությունը չեն կազմեր» («Աշխարհի լույսն ի Հայս», Ա, էջ 20):



Անմահության գաղափարը մեկն է դարձյալ փշոտ հարցերին, ուր գիտությունը կուգա բախիլ կրոնական ըմբռնումներու հետ: Պետք են շատ ավելի զորավոր դեմքեր, քան ինչ որ մեզ կհամարձիթ աստվածաբանությունը, գիտության զենքերուն դեմ կարենալ ձակառելու համար: Պետք է պահ մը հեռանալ հանդերձալ աշխարհի կրոնական բանաձևն ու փաստեր փնտռել գիտության իսկ շրջանակին մեջ:

Գարեգին Տրապիզոնցին այդ նյութն ալ շոշափած է ատենին: Այցե մը հետո, որ տված է կես դար առաջ Տարոն աշխարհին՝ համոզուելու համար նվիրական հողը, որ հայ ժողովուրդին իր սեծագույն գավազը՝ Մեսրոպը տվավ, իր հոգին պահ մը կմխրձվի զարեբուն խորը՝ տգեղություն համար հայ ժողովուրդի մեծ անմահները:

Այդ առթիվ է, որ ան կհարադրե քանի մը խորհրդածություններ անմահության գաղափարին շուրջ:

«Առանց մահի, այսինքն՝ տարրալուծումի, չկա անմահություն, միտքը բյուր անգամ կմեռնի ուղեղի յուրաքանչյուր մասունքների մեջ, ուր կյանքի պատկեր մը կծնի: Մահը կյանք մը կըլլա: Մնունդին գերազանց նպատակն իսկ մահն է, ինչպես և մահվան հարաջուլցն է անմահությունը: Առանց այս բացարձակ հակօրինության՝ կյանքն ինքնին պիտի դառնար անհնարություն մը: Հայրերը պետք է մեռնին իրենց զավակներուն մեջ» («Աշխարհի լույսն ի Հայս», Ա, էջ 250):

«Անմահության պաշտամունքն էր, որ տվավ բոց մարդու մտքին ու թոփշը անոր երեակալություն» («Տարոնաշունչ»):

Նյութի և հոգիի պայքարը, իր կարգին, զբաղեցուցեր է դարերը, ու կզբաղեն և մահվանը ներկա դարը, ուր գիտությունը, իր նվաճումներուն կոթնած, կձգտի նյութին գերակայությունը հռչակել: Որքան զովար է հետևարար կրոնքի սպասավորներուն համար հոգիին դերը ևս արժեքներ:



Նյութի և հոգիի պայքարը նոր օրերու մտնունդներուն լույսով լուծելու համար բավական չեն սակայն աստվածաբանական հին փաստարկությունները: Պետք են տարբեր չափանիշ ու տարբեր փաստեր: Գարեգին Տրապիզդնցիի փորձը ինք ալ կընեն այս ուղղությամբ:

«Ահհնար է ուրանալ, — կզբն ան, — նյութի և հոգիի սերտ ու գեղեցիկ հարաբերությունը կյանքի բոլոր հայտնության մեջ: Մարդը աստվածային, այսինքն՝ «լա» (ultime) կասարելություն մը կարելիություններով օժտված զանգված մ'է հոգի և լույսի: Մահն ու կյանքը անոր էությունն իսկ են» («Շողակաթումներ», էջ 10):



Կյանքի առեղծվածը, նմանապես, զբաղեցուցեր է բոլոր մտածող մարդիկը, և չէր կոնար շղթադեցնել նաև Գարեգին Տրապիզդնցին: Կնճիռ մըն է, որ զբաղեցուցած է բոլոր դարերը, ու միշտ ալ մնացեր է այժմեական, որովհետև ամենքը կարծած են զայն լուծած ըլլալ, առանց սակայն զայն լուծել կրցած ըլլալու:

«Ի՞նչ է, ի՞նչ, այն խորհրդավոր ճամբան՝ որ մեր արգանդեն կսկսի և երկրի արգանդով կվերադառնա: Ցավի բնազդական ճիշ մը՝ իրբե թե ողջունելու համար լույս-աշխարհը, և արցունքը ինքնաբերական շիթ մը՝ օրհասական հրաժեշտի փղձկոմով դառնացած, կկապեն ծնունդն ու մահը իրարու» («Շողակաթումներ», էջ 41):

Բնությունը, կասկած չկա, որ զբաղեցուցած է ինքը ևս հին ու նոր բոլոր փիլիսո-

փաները: Ան կփռվի մեր աչքերուն ու մեր գիտակցության առջև, ու ամեն վայրկյան դադունքի մը կկորցնեք մենք անկե: Բայց դեռ չլուծված որքան գաղտնիքներ կան այդ բնության մեջ, և դեռ ո՞րքան խորհրդավոր բաներ:

Գարեգին Տրապիզդնցին կհավատա նախ, թե դիավաճներ չկան բնության մեջ:

«Բնության մեջ ոչինչ կա պատահական՝ զոր անկարելի ըլլա բացատրել պատճառի և արդյունքի կապակցության և փոխհարաբերությանց անհնղի օրենքներով: Ինչ որ կկոչվի պիտակարար պատահաւ, այդ կենթադրեն նույն օրենքներու մասին մեր ունեցած անգիտությունը» («Շողակաթումներ», էջ 19):

Եվ փոխարեն՝ որքան գեղեցկություն ու ներդաշնակություն կըրովանդակ բնությունը:

«Ո՞վ չէ ունեցեր սերն ու ներշնչում Մայր-բնության: Ո՞րքան գեղեցիկ և սակայն անթափանցելի խորհուրդներով լեցուն է ան: Հոգեզմայլ հանդիսատեսները չենք կյանքի այն փայլակերթաց շարժապատկերներուն՝ որոնցմով իրերահաջորդ անհատնում արշալույսներն ու վերջալույսները, արևափառ ցեղերեններն ու աստղավառ գիշերները իրենց անհամար սքանչելիք կցուցադրեն հոն ամեն օր:

...Ի՞նչ և ինչո՞ւ են, սակայն, կյանքի այս աննման հայտնությունները, ուր կուտեն ու գիծներ, գույներն ու ձևերը, ձայներն ու թրթռումները աշխարհի ճարտար առնթրեհարություններ, հիանալի ընդերուզումներով, անթերի համաշխարհություններով, սըրտագրավ համադրություններով և անվրիպ ճշտությամբ կներդաշնակավորվին: Հակադրությունները — իրբե բնության ոստոսությունները — թերևս արդյունք են մեր ողբալի տգիտության, վասնզի տիեզերական իմաստուն ճարտարապետության մեջ անհնար պիտի ըլլար պահանջարկ տեսնել այն աստիճանական և շարահարալ հառաջատվությունը՝ որով հյուսն տիեզերքին և մանրեն մարդուն մեջ կգտնեն իրենց լրումը և բոլորը միասին իրենց բացատրությունը արարչագրած մեծ զորության մեջ:

Ինչ որ սակայն, ոչ նվազ կրնա զբաղել մեր ուշադրությունը, այդ այն իրողությունն է՝ որուն համաձայն տեղի կուռնենան տիեզերքի մեջ բոլոր սկիզբներն ու վախճանները, հավիլումներն ու նվազումները, գերաճումներն ու անճիտումները: Մայր-բնությունը մեզ կուտա այդ իրողության ապշեցուցիչ մանրամասնությունները՝ զորս հաճախ կզիտենք սովորական և անտարբեր աչքով: («Շողակաթումներ», էջ 51):

Որքան մեկան սպառած են մարդիկ կրոն-
ներու թիւ ու դեմ: Մեր ներկա դարուն մա-
նապանդ, երբ մարդկային հոգին կուզե
փշրել բոլոր թուամբերը և մարդոց միտքը
կփորձե բառնալ ինչ որ հայտ չի գտներ գի-
տութիւնն նոր պատգամներուն հետ: Կյանքի
դեմ պայքարը կհրահարեն ոչ միայն մտքի և
հոգիի ազատութեան կողմնակիցները, այլ
բոլոր այն զեղծումները, որ կզոռծվին հանուն
կրոնի:

Գարեգին Տրապիզոնցիի համար կրոնը
«պարզ կյանքն է, որ իր մեջ կստացնեն ար-
դարութենէն ու խաղաղութենէն ըխած բոլոր
առողջ սկզբունքները»... Անոր հիմն ու խա-
րիսխն է՝ ամեն մթութիւններն և նախա-
պաշարումներն, ամեն վիճահարուց սո-
փեստութիւններն վեր՝ անպայման նվիրվող,
անշահախնդրորեն զոհաբերվող Սերբ. զի
այս սերն է անսպառ լուսաղբոր տիեզերա-
կան եղբայրության գաղափարն ու տեսիլն ի-
րականացնող իրերահաշտութեան և իրերա-
հասկացողութեան, մարդոց մեջ աստվածա-
յին ենդդաշնակութեան» («Աշխարհի լույսն ի
Հայս», Բ, էջ ԺԸ):

Կրոնը գեոեղեյն հետո այսպես սիրո գա-
ղափարին մեջ, Գարեգին Տրապիզոնցիին
կմերժե ամեն կենդոտութիւն, որ կրնար
ստվեր ածել անոր պարզութեան վրա («Աշ-
խարհի լույսն ի Հայս», Բ, էջ ԺԷ):

Կրոնը, սակայն, ըստ Գարեգին Տրապի-
զոնցիի, կարելի չէ ըմբռնել առանց բարո-
յականի, որ հիմքն է անոր, և հոգեկան գե-
րագոյն կապը մարդոց միջև:

«Ինչպես ճշմարիտ կրոնը, — ո՛չ դավա-
նական և վարդապետական, ծիսական և ա-
րարողական, — նո՛ւնպես ալ ճշմարիտ բա-
րոյականը, — ո՛չ ձևական և պայմանադրա-
կան, պատահական և փոփոխական, — տիե-
զերական է: Ընկերային սրբազան դաշն մ'է
այն՝ որ կմիացնե ամբողջ մարդկութիւնն ի-
րարու, ամբապնդելով համեղբայրութեան
կապն ու գաղափարը: Արդուն, լեզուն, սեռը,
գոյնը, ֆիզիկական այլազան շնորհներն ու
ձիւրքերը ոչինչով կրնան խանգարել այդ
միութիւնը: Կրոնն ու բարոյականը, այս-
պես, ընկերային մարզին մեջ կգտնեն իրենց
միախառնման կետը: Ապահարզան մը կրո-
նի և բարոյականի միջև կթվի, թե այնքան
արվեստական է, ո՛րքան անկարելի և անի-
մաստ» («Շողակաթումներ», էջ 9):

Իսկ ծեսը, Գարեգին Տրապիզոնցիի կար-
ծիքով, արտաքին ձևակերպութիւնն մըն է
միայն և կապ չունի կրոնքի էութեան հետ
 («Աշխարհի լույսն ի Հայս», Բ, էջ ԺԷ):

Գարեգին Տրապիզոնցիին մարդկային հո-
գիի բոլոր երևութիւններուն մեջ գլխավոր տե-
ղը կուտա իմացական ուժերուն: Այդ ուժերն

են, ըստ իրեն, որ կկառավարեն աշխարհը և
իմաստ կուտան անոր:

«Առանց խորհուրդի (pensée), կըսե ան,
— առանց հղացումի ոչինչ կրնա գոյութիւն
առնել: Արվեստի գործ մը արվեստագետին
խորհուրդին, մտապատկերին մարմնառու-
թիւնն է: Հրաշակերտ կոթող մը, իր բոլոր
տեսանելի և աննշմարելի նրբութիւններով,
չի՞ մատնէր հանճարի մը բովանդակ ճա-
ռագայթումներն ու անոնց ներդաշնակ վնտ-
փութումները» («Շողակաթումներ», էջ 17):

«Իմացական ուժերու շնորհիվ է, որ հոգին
կխորհի, կտրամաբանե, կզուգործե, կվերլու-
ծե, կմականծե, կընծայե (dédoune), կգի-
տակցի, կըմբռնե, կերևակայի» («Շողա-
կաթումներ», էջ 74):



Հապարակական հարցերը ևս չէին կրնար
դուրս մնալ իր տեսագաշտեն: Անոնցմէ
շատ շատերուն կհանդիպինք իր գրութեանց
մեջ, ոմանք մշակված ձևով, ուրիշներ հիշա-
տակված իր խորհրդածութեանց կարգին:

Ուրույն ցեղերու և ազգութիւններու գո-
յութիւնը կվտանգե՝ արդդոք մարդկային եղ-
բայրութիւնը, որուն այնքան կրաղձա հա-
ռաշնադեմ աշխարհը, հարց մը, որ նույնպես
զբաղեցուցած է Գարեգին Տրապիզոնցիին ու-
րիշ բազմաթիվ հասարակական հարցերու
կարգին, և որուն կնկիրի քանի մը շահեկան
խորհրդածութիւններ:

Կարծե կարդալ իր մտածումները, թուլթի
հանձնված առաջին աշխարհամարտեն քիչ
հետո:

«Քսաներորդ դարը — լուսադարը — տե-
սավ համաշխարհային աննախընթաց ու
քստմենցուցիչ ճակատամարտը: Մարդկային
ամոթապարտ բնադններու ստորերկրյա եր-
կար խլրտումներ պատրաստեցին անոր դի-
վանհար բոլոր ռազմամթերքը: Հանկարծա-
կան պողծիւտ մը ծնունդ տվավ անոր և հա-
մաճարակ բոցավառում մը կլանեց բովան-
դակ աշխարհը: Քաղաքակրթական մեծա-
ղորդ սկզբունքներ և մարդասիրական փրո-
ուուց նշանաբաններ ճգնեցան արարացնել
անոր ահարկու երևումը: Պաշտոնական ոս-
կեզօծ խոստումներ և հանդիսական ժրպ-
տուն հանձնառութիւններ սրեցին բթացած
ախորժակներն անգամ: Տիեզերական խիղճը
թմրեցավ: Կիրքերը հրահրվեցան: Քրանա-
կանութիւնը կարծես նոր կիզեցավ ալի-
ցուց անելութեան բոցին վրա: Քնացած
գազանն արթնցավ և խոյացավ՝ սանձար-
ձակ՝ մարտահրավեր ասպարեզին մեջ: Մո-
լեգնոտ գիրկընդխառնումի մը պահուն եղ-
բայրներ եկան դեմ-դեմի, առանց կարենալ
զիրար ճանչնալու և առանց գիտնալու, թե

ինչո՞ւ Մարդկության ընտրելագույն և կանաչարև զավակներեն միխոններ խողխողվեցան անգիտորեն «վայրկենական հաճույքի մը համար»։ Օրենքը, որ իրավունքով կդառապարտե անհատական ոճիրները,— հաճախ ի՞ր իսկ երկունքը, ալա՜ղ,— նմիրագործեց համայնաշինչ այս մեծ ոճիրը անիրավորեն» («Շողակաթումներ», էջ 61)։



Բայց ինչ որ ամենեն ավելի առանցքն է կազմած Գարեգին Տրապիզոնցիի հոգեկան մատահոգություններուն, մարդը ինչքան է իբրև բարոյական էակ։ Մարդն է բնութիւն հրաշալիքը և հիմքը կյանքին, որ իր շուրջը կթափալի։ Ի՞նչ փուլից, թե ան դեռ հասած չէ իր հոգեկան կատարելության. ան կրնա՞ հասնիլ։

Թե մարդը, իբրև ընկերային անհատ, անկատար է,— ոչ մեկ կասկած։ Միայն թե ան օժտված է կատարելությամբ կարելիությամբ, հետևաբար կրնա և պարտի ըլլալ կատարյալ։ Այս է իր կոչումը։ Մինչև կատարելության ժամանակը, սակայն, ան պիտի անցնի դանազան փորձություններ։ Պիտի գալթի ու պիտի կանգնի անընդհատ։ Այս անկումներն ու բարձրացումները ոչինչով պիտի դառնացնեն կյանքը, եթե ընթացքն ուղղված ըլլա դեպի ճշմարիտ նպատակակետը, դեպի խաղաղության և երանության հանգրվանը» («Շողակաթումներ», էջ 186)։

Որպեսզի մարդ կատարելության հասնի, պետք է ան միշտ ձգտի դեպի հիմնական կանոնները հոգեկան կյանքին։

Անդրանիկ կոնդակին մեջ, զոր 1951 մայիս 20-ին Գարեգին պատրիարք կուղղեր Թուրքիոյ Հայության և որ վճիտ աշխարհաբարով զրկած «աւետարանաշունչ խոսքեր»-ու փունջ մըն էր իրեն հանձնված հոտին զանազան դասերուն ու խավերուն ուղղված, կյանքի հիմնական կանոնները կհրուշակիր սերը, խաղաղությունը, ճշմարտությունը և աղագոյությունը, հայտնելով, որ սիրտ, միտք, հոգի և մարմին պետք է հավասարապես բանալ կատարելության ճամբան։ «Սիրտը,— կըսեր,— սկիզբն ու վախճանը կյանքին՝ մեր մոլորակին վրա, կկատարել իր դերը, լեցված նեկատարով սիրույն, որ կվտարել մախանքն ու ատելութունը՝ իրենց բոլոր տխուր հետևանքներով։ Ստիպեալ թաղթրահամ պտուղներն են՝ գուլթ, կարեկցություն, արգահատանք, գորով, որոնք ընկերային շարիքները կշնչեն՝ վերականգնող զղջում և հոգեւոր վերանորոգում հառաջ բերելով։ Այսոնք կկազդուրեն կյանքն և կբարձ-

րացնեն անոր մակարդակը։ Անկումներու հանդեպ վեր բռնող ձեռքն ունի սերը»։

Բայց գերագույնը առաքինությանց, որուն մարդ պետք է զոհն ամեն բան՝ ճշմարտութիւնն է։

«Բարոյական ըմբռնումով չկա ավելի սիրելի բան մը, քան ճշմարտությունը։ Ամեն ինչ կարելի է և պետք է զոհել անոր սիրույն և դատին համար։ Երկրավոր որևէ կայաց, ընտանեկան՝ բարեկամական թե ընկերական, հարստության թե փառքի, չի կրնար դորել անտեսելու կամ արհամարհելու զայն» («Աշխարհի լույսն ի Հայս», Բ, էջ 362)։

Հոգեկան արժեքներուն տիրանալու համար ճիշդ պետք է սակայն և կամք։ Ու մանավանդ պետք է հեռու մնալ արհամարհանքի («Աշխարհի լույսն ի Հայս», Ա, էջ 23)։

Մարդը կզգիացած մասնիկ մը է բնութիւն մեջ։ Ան օղակն է նախ սերունդներու միջև, հետևաբար և դաբերուն։

«Անձը ոչ միայն համադրությունն է անհատական բոլոր ընդունակություններ, այլ նաև ընդունարանն ու մշակատեղին է ընկերային տարրին։ Առանց ասոր ցնորք մը պիտի ըլլար նույնիսկ «անձ»-ին գոյութիւնը։ Անհատական ընդունակություններն անգամ կուտակուի մը չեն բազմադարյան և բազմադան ալ ընդունակությանց՝ զոր անցնող անհատներ կամ սերունդներ, տոկոսաբեր ջանքերով, կկտակեն եկող անհատներուն։ Ներկայի անհատը անցյալի ընկերությունն է և ապագայի անհատին մեջ ներկայի— այն ատեն անցյալի— ընկերության մեկ մասը պիտի ըլլա։ («Շողակաթումներ», էջ 206)։ Առանց հավաքականության, մարդ էակը ինքն ալ չկա։ Մեկը չկա՝ եթե ամենքը չկան։ Մարդկային ընկերությունն է, որ դեր ու արժեք կուտա անհատին։

«Մարդը առաջնորդել դեպի ընկերություն, անհատը դեպի հավաքականություն. ա՛յս է կոչումը ճշմարիտ քաղաքակրթության։ Ըսված է. «Մեկը ամենուն և ամենը մեկուն համար»։ Կարելի է ավելցնել. «Մեկը ամենուն և ամենը մեկուն մեջ»։ Ի՞նչ է իրապես շահն անոր՝ որ, անտեսելով ընդհանուրը, կսպառն իր բոլոր ուժերը, շարաշար քամելով նաև ուրիշներու կորովը, իրեն միայն մասնավորելու համար «գաշխարհ ամենայն»։ Ընկերային բարոյական, որ հավասարակշռության օրենքն է ամեն մարդի մեջ, կրնա՞ նմիրագործել այս անհարթությունները որոնք ոչ միայն կհամարժեցան, այլ նաև կթանձարացնեն կյանքի բառը» («Շողակաթումներ», էջ 206)։

(Շառունակեի)